Հավելված N 11
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 26-ի N 383 - Ն որոշման

# ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԿԱՐԳԸ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակավորված ուղեկցորդների և թեկնածուների վերապատրաստումն իրականացվում է հետևյալ թեմաներով՝

1) Հայաստանի կենդանական և բուսական աշխարհ բնության հատուկ պահպանվող տարածքներ (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր և բնության հուշարձաններ),

2) Հայաստանի աշխարհագրություն,

3) Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսներ և մշակութային ժառանգություն,

4) առաջին օգնություն,

5) ֆիզիկական պատրաստվածություն (գործնական)՝ ըստ սույն որոշման հավելված 15-ով սահմանված մասնագիտական ուղղությունների տեսակների վերաբերելիության,

6) սանիտարահամաճարակային անվտանգության կանոններ և հանրության (մարդու) առողջության անվտանգության ապահովման հանրային առողջապահական նորմատիվներ,

7) էթիկա,

8) ուղեկցորդի հմտություններ՝ ըստ սույն որոշման հավելված 15-ով սահմանված մասնագիտական ուղղությունների տեսակների վերաբերելիության,

9) «Զբոսաշրջության մասին» օրենք, դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր և հարակից իրավական ակտեր,

10) հոգեբանություն,

11) օտար լեզուներ (նախընտրությունը՝ Հայաստանի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների խմբերի ծագման վայրի երկրի պաշտոնական լեզուներին),

12) միջմշակութային հաղորդակցություն և ներառականություն,

13) մասնագիտական գիտելիքների փոխանցման հմտություններ:

2. Յուրաքանչյուր երեք օրացուցային տարին մեկ Կոմիտեի նախագահը հաստատում և վերանայում է թեկնածուների վերապատրաստման և որակավորված ուղեկցորդների պարտադիր վերապատրաստման ծրագրերի բովանդակությունը՝ քննարկելով ուղեկցորդների միավորումների և վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների հետ:

3. Ուղեկցորդի որակավորում ստացող թեկնածուների համար վերապատրաստման ժամկետներն են՝

1) սույն որոշմամբ հաստատված Հավելված 10-ի 4-րդ կետով դիմող թեկնածուների համար՝ 3 կամ 6 ամիս, յուրաքանչյուր շաբաթվա համար համապատասխանաբար 20 կամ 12 ակադեմիական ժամ.

2) սույն որոշմամբ հաստատված Հավելված 10-ի 5-րդ կետի 1-ին ենթակետով արագացված ընթացակարգով դիմող թեկնածուների համար՝ 1 շաբաթ, 20 ակադեմիական ժամ և 5 գործնական դաս.

3) սույն որոշմամբ հաստատված Հավելված 10-ի 5-րդ կետի 2-3-րդ ենթակետերով արագացված ընթացակարգով դիմող թեկնածուների համար՝ 2-3 շաբաթ, ընդհանուր 40 ակադեմիական ժամ և 10 գործնական դաս:

4. Որակավորված ուղեկցորդները պարտավոր են յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ պարտադիր վերապատրաստվել առնվազն 25 ակադեմիական ժամ:

5. Որակավորված ուղեկցորդների համար վերապատրաստման ծրագիրը ներառում է սույն Հավելված 11-ի 1-ին կետով սահմանված թեմաները: Որակավորված ուղեկցորդների համար վերապատրաստման ծրագիրը կարող է ներառել Հավելված 3-ի 1-ին կետով չնախատեսված լրացուցիչ թեմաներ:

6. Որակավորված ուղեկցորդները կարող են համարվել իրենց պարտադիր վերապատրաստման ժամերը լրացրած, եթե նրանք տվյալ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում առկա կամ

հեռավար եղանակով ստացել կամ ուսուցանել են այլ դասընթաց, որն առավելապես կամ հիմնականում ներառում է սույն Հավելված 11-ի 1-ին կետով սահմանված թեմաները, բացառությամբ սույն Հավելված 11-ի 7-րդ կետով սահմանված դեպքի:

7. Որակավորված ուղեկցորդների համար վերապատրաստումը պարտադիր է սույն Հավելված 11-ի 1-ին կետի 5-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված թեմաներով:

8. Թեկնածուների համար նախատեսված վերապատրաստման և որակավորված ուղեկցորդների պարտադիր վերապատրաստումն իրականացնում է «Զբոսաշրջության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ հոդվածի հիման վերապատրաստման իրավասություն ունեցող անձը:

9. «Զբոսաշրջության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձի բացակայության դեպքում վերապատրաստումը կարող է իրականացնել Կոմիտեն կամ Կոմիտեն կամ Կոմիտեի կողմից հաստատված ծրագրի չափանիշների, գրականության ցանկի հիման վրա և սահմանված չափանիշներով ընտրված անձը կամ անձինք:

10. Վերապատրաստման դասընթացին մասնակցությունը ամփոփվում է գործնական և տեսական քննություններով:

11. Սույն հավելված N 11-ի 10-րդ կետով նախատեսված քննությունների դրական արդյունքների պարագայում տրվում է ավարտական վկայական, որի ներդիրը ներառում է քննությունների արդյունքները:

12. Վերապատրաստման դասընթացի ընթացքում Կոմիտեն կարող է ցանկացած ժամանակ իրականացնել մշտադիտարկում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ